

ՀՀ Արմավիր մարզպետ Համբարձում Մաթեոսյանին
Արմավիրի քաղաքացիական-երիտասարդական
Կենտրոնին կից ստեղծված «Երիտասարդական
ավանգարդ» ՀԿ նախագահ, ՀՀ քաղաքացի
Սուսաննա Մատինյանից
Հասցե. Հայաստան, ք.Արմավիր, Հանրապետության
29/5 (Յունի Բանկի 2-րդ հարկ)
Հեռ. բջջ.՝ 098 55 44 06,
E-mail armavircenter.cyc@gmail.com

05 փետրվարի, 2019թ.
Տեղեկության հարցում

Հարգելի պարոն Մաթեոսյան,

Համաձայն ՀՀ Սահմանադրության 51-րդ հոդվածի եւ «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ եւ 9-րդ հոդվածների՝ խնդրում եմ տրամադրել հետեւյալ տեղեկատվությունները.

1. դեպի ք.

Արմավիր քաղաքի ո՞ր հանրակրթական դպրոցներում են այժմ շարունակում իրենց կրթությունը Արմավիրի ՈՒհատուկ (օժանդակ) դպրոցի կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող երեխաները (այսուհետ՝ ԿԱՊԿՈՒ).
(Նախորդ հարցմանը նշվել է միայն երեխաների թիվը. նշել դպրոցների համարները.)

2. Տրամադրել Սարդարապատ, Լենուդի, Արագածի, Լեոնազոգ, Փշատավան, Նորապատ, Արտաշար, Ակնալիճ, Փարաքար, Մերձավան, Գայ, Արմավիր քաղաքի, Վաղարշապատի N12, Վաղարշապատի N3, Վաղարշապատի N9, դպրոցներում ներառված երեխաների
- 2.1 Անհատական ուսուցման պլանը (ԱՈՒՊ)
 - 2.2 Մանկավարժահոգեբանական ծառայությունների անհատական պլանը (ՄԱԾԱՊ)
 - 2.3 ԿԱՊԿՈՒ աշակերտի անհատական թղթապանակը
 - 2.4 Վերոնշյալ դպրոցների բյուջեները


Խնդրում եմ սույն հարցմանը պատասխանել օրենքով սահմանված կարգով եւ ժամկետներում:

Խնդրում եմ հարցման պատասխանն ուղարկել էլեկտրոնային տարբերակով՝
armavircenter.cyc@gmail.com էլեկտրոնային հասցեին:

Տեղեկություն հարցնող՝
Սուսաննա Մատինյան



Աղյիք՝ 2 էջ:





Արմավիրի քաղաքացիական-երիտասարդական կենտրոնին
կից ստեղծված «Երիտասարդական ավանգարդ» ՀԿ
Արմավիր, Հանրապետության փ., 29/5

Armavir yout-civic center
Armavir, str.Hanrapetutyun 29/5
“Youth avangard” NGO

05 փետրվարի, 2019

Արմավիրի մարզպետ Համբարձում Մաթետոյանին

Հասցե՝ Արմավիր, Աբովյան 71

Հեռ. (0237) 2 37 16

Էլ. փոստ armavir@mta.gov.am

«Երիտասարդական ավանգարդ» ՀԿ նախագահ Սուսաննա Մատինյանից

Հարգելի պարոն Մաթետոյան,

«Երիտասարդական ավանգարդ» ՀԿ-ն, «Դրական փոփոխություններ քաղաքացիական հասարակության հզորացմամբ» ծրագրի շրջանակներում, Եվրոպական միություն և Բաց հասարակություն հիմնադրամներ-Հայաստանի աջակցությամբ, Արմավիրի մարզի 15 թիրախ համայնքներում նախատեսում է իրականացնել ուսումնասիրություն.

Ուսումնասիրության նպատակն է.

Համընդհանուր ներառական կրթության անցած Արմավիրի մարզի 15 թիրախ քաղաքային և գյուղական համայնքների դպրոցներում (Սարդարապատ, Լենուդի, Արագածի, Լեռնագոգ, Փշատավան, Նորապատ, Արտաշար, Ակնալիճ, Փարաբար, Մերձավան, Գայ, Արմավիր քաղաքի, Վաղարշապատի N12, Վաղարշապատի N3, Վաղարշապատի N9) իրականացնել ուսումնասիրություններ, վեր հանելով առկա խնդիրները և գնահատել որքանով են հասուն կրթական կարիքները համապատասխանում ներդրված համակարգին.

«Համընդհանուր ներառականացումը և կրթության առանձնահատուկ կարիքներն Արմավիրի մարզում» ուսումնասիրությունն ունենալու է 3 բաղադրիչ.

1. Փաստաթղթային ուսումնասիրություն,
2. Ֆոկուս խմբային հանդիպում-քննարկումներ՝ աշակերտ, ծնող, ուսուցիչ, տնօրեն
3. Դիտարկումներ՝ դիտարկման քարտեր

Այս նամակով, խնդրում եմ Ձեզ թույլ տալ մեր աշխատանքների իրականացումը վերոնշյալ համայնքների դպրոցներում: Խնդրում ենք նաև, հորդորել դպրոցի տնօրեններին համագործակցելու և աջակցելու մեզ ծրագրի իրականացման փուլերում, մասնավորապես, աշակերտների և ծնողների մասնակցությունը ապահովելու աշխատանքներում:

Մարզպետարանի և «Երիտասարդական ավանգարդ» ՀԿ-ի միջև այս խնդրանքին վերաբերվող հետագա աշխատանքների արդյունավետ կազմակերպման համար, խնդրում եմ մարզպետարանից հանձնարարել որեւէ պաշտոնյայի որպես կոնտակտային անձի, մեզ հաղորդելով անունը և կոնտակտային տվյալները: «Երիտասարդական ավանգարդ» ՀԿ կողմից այս աշխատանքների կազմակերպման և ղեկավարման կոնտակտային անձ է ՀԿ նախագահը՝ Սուսաննա Մատինյան. Հեռ. 098 55 44 06, Էլ. Հասցե.

susanna.matinyan92@gmail.com armavircenter.cyc@gmail.com

Հարգանքներով՝

Արմավիրի քաղաքացիական-երիտասարդական կենտրոնին կից ստեղծված
«Երիտասարդական ավանգարդ» ՀԿ

Սուսաննա Մատինյան 